ՈՍԿԵՀԱՏԻ ՍՐԲԱՏԵՂԻՆ

Մ.Փ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայկական լեռնաշխարհի բնիկների պաշտամունքային պատկերացումների մեջ մեծ տեղ է գրավել բնության, տիեզերքի պաշտամունքը: Այդ պաշտամունքին առնչվող ծեսերը, արարողությունները կատարվել են հատուկ լեռնային սրբատեղիներում: Դրանք այն բացօթյա «տաճարներն» են, որտեղ արվել են տիեզերքի դիտարկումներ, և ժայռափոր պատկերագրերով փորագրվել են երկնային մարմինների պատկերները: Լեռնային սրբատեղիներում երկրաչափական ձևի փորագրությունները, պատկերելով արևը, լուսինը, աստղերը, արտահայտում են երկնքի, տիեզերքի գաղափարը[1]: Հատուկ ընտրված լեռնային սրբատեղիները նաև տիեզերքի, մարդու և Աստծո հաղորդակցման վայրերն են: Ընդհանրապես, հին ժողովուրդների մտածողությամբ՝ լեռը, լեռնային ժայռակերտ սրբատեղին ընկալվել են որպես վերին աշխարհ, տիեզերք: Շումերական արարչության առասպելում երկնքի աստված Անը, որը շումերների հիմնական աստվածն էր, լինում էր լեռան գագաթին[2]: Հին հունական առասպելներում էլ Օլիմպոս լեռան վրա են հաստատվում հզոր աստված Զևսը և նրա կողմնակիցները[3]:

Աստվածաշնչում լեռը խորհրդանշում է սրբազան, աստվածային այն վայրը, որտեղ տեղի է ունենում մարդու և Աստծո հաղորդակցումը: Աստված, Մովսեսին Սինա լեռը կանչելով, երկու քարե տախտակների վրա գրեց տասը պատվիրանները, կանոնները, որոնցով պիտի առաջնորդվեր Իսրայելի ժողովուրդը, և տախտակները տվեց նրան: Այստեղ Մովսեսը տեսավ աստվածային փառքը[4]: Նույնպես և Եղիային կանչեց Քորեբ լեռան վրա և խոսեց նրա հետ[5]:

Արարատ լեռան բարձունքում Աստված օրհնեց Նոյին ու նրա որդիներին և այնտեղ նրա հետ հավիտենական ուխտ հաստատեց, որ Երկիրը ավերող ջրհեղեղ այլևս չի լինի և փրկության ավետիսը վկայեց սրբազան Արարատի լեռներում[6]:

Հիսուս Քրիստոսն էլ քարոզելիս կամ աղոթելիս հաճախ ելնում էր լեռը և այնտեղից խոսում Ավետյաց երկրի մասին[7]: Իսկ հարությունից հետո գալիս է Ձիթենյաց լեռը, որտեղ իր աշակերտներին հրամայում է ամբողջ աշխարհով տարածել փրկության ավետարանը և Ձիթենյաց լեռան վրայից էլ մեծ փառքով երկինք է համբարձվում[8]: Իսկ ըստ Եսայի մարգարեի՝ «Եվ կլինի օրերի վերջին, որ հաստատ կլինի Տիրոջ տան սարը՝ սարերի գլխին և կբարձրանա բլուրներից և հորդելով նրա մոտ կգան բոլոր ազգերը»[9]:

---

[1] Հ. Մարտիրոսյան, Գիտությունը սկսվում է նախնադարում (այսուհետև՝ ԳՄՆ) Ե., 1978, էջ 18:

[2] Д. Редер, Мифы и легенды древнего Двуречья, М., 1965, с. 24.

[3] Ե. Կուն, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Ե., 1979, էջ 20:

[4] Աստվածաշունչ, Ելից, գլ. ԺԹ 3, 18, 20, Բ Օրինաց գլ. Ե, 4, 5, 22:

[5] Նույն տեղում, Գ Թագավորաց. գլ. ԺԹ, 8 - 15:

[6] Նույն տեղում, Ծննդոց, գլ. Ը, 4.20 - 22, գլ. Թ, 8 - 14:

[7] Նույն տեղում, Մատթեոս, գլ. Ե, 1 - 13:

[8] Նույն տեղում, Մատթեոս, գլ. ԻԸ, 16 - 20:

[9] Նույն տեղում, Եսայի, գլ. Բ, 2 - 3: Սաղմոս, գլ. ԿԸ, 15 - 16:

Լեռնային սրբատեղիի պաշտամունքի յուրօրինակ արտահայտություն երևում է «Սասունցի Դավիթ» դյուցազներգության մեջ: Փոքր Մհերը աշխարհից հեռացավ, փակվեց Վանի քարաժայռերից մեկում[10]:

Քարաժայռը խորհրդանիշն է տիեզերքի, սրբազան, աստվածային այն աշխարհի, որից կախված են երկրի դրական փոփոխությունը, կյանքի բարօրությունը:

Հայաստանը հարուստ է տիեզերքի և բնության պաշտամունքի հետ կապված լեռնային սրբատեղիներով: Այս տիպի հուշարձանները բազմաբովանդակ են, սրանցում առկա են ինքնատիպ ժայռապատկերներ, ժայռափոր պատկերագիր-գաղափարագրեր:

Ժայռակերտ սրբատեղիներում արտահայտված պատկերների համեմատությունները ցույց են տալիս, որ դրանք արվել են տարբեր ժամանակներում՝ նեոլիթ-էնեոլիթ, բրոնզե դար, նաև ավելի ուշ շրջաններում: Այդպիսի լեռնային սրբատեղիներ կան Գեղամա լեռներում[11], Մեծամորում, Կաքավաբերդում[12], Արագածոտնի մարզի Ագարակ[13] և Ոսկեհատ գյուղերում: Իր տեսակի մեջ եզակի ժայռակերտ սրբատեղի է Ոսկեհատի՝ տիեզերական պատկերացումների խորհրդանիշներով սրբատեղին: Այն գտնվում է Ամբերդ գետի ձախ ափին, տարածված է հսկա լեռնային զանգվածի վրա, ընդգրկում է մոտավորապես 500 քառ.մ տարածություն: Այս հուշարձանը ժամանակագրական առումով մոտ է Ագարակի, Մեծամորի բրոնզեդարյան հուշարձաններին և նրանց նման հարուստ է ու բազմաբովանդակ: Այստեղ փորագրությունները կատարված են ինչպես դագաթամերձ հարթակում, այնպես էլ ժայռի ճակատային հատվածներում: Ժայռի արևմտյան մասում կա քարանձավ՝ ուղղանկյուն մուտքով, եզրերին փորված են կլոր փոսիկներ: Քարանձավից դեպի հարավ, գետնից մոտավորապես 0,1մ բարձրության վրա, ժայռային զանգվածին փորված է կլոր անցք, որն հավանորեն օգտագործվել է որպես բռնակ՝ զոհաբերվող կենդանիներ կապելու համար: Նման բռնակներ կան Մեծամորի[14], Ագարակի[15] պաշտամունքային հուշարձաններում:

Եզակի պատկերներ են արված ժայռակերտ սրբատեղիի հյուսիսային հատվածում: Հսկա ժայռային զանգվածը, որի երեսը լավ հարթեցված է, բաժանված է երկու մասի: Առաջինը նայում է դեպի հարավ-արևելք, վրան փորված և օրինաչափորեն դասավորված են հինգ կլոր փոսիկներ. երկուսը՝ վերև, երեքը՝ ներքև, իսկ ժայռի վերնամասում երկու զույգ, իրար միացած, ավելի փոքր փոսիկներ են: Առաջին ժայռազանգվածից մոտ 0,5մ հեռավորության վրա երկրորդ հարթեցված ժայռազանգվածն է, որի վերնամասում միաշարք, հորիզոնական դասավորված, միջին մեծության

[10] Սասունցի Դավիթ, Ե., 1989, էջ 416:
[11] ԳՄՆ, էջ 9:
[12] Է.Խանզադյան, Կ.Հ.Մկրտչյան, Է.Ս.Պարսամյան, Մեծամոր (այսուհետև՝ Մեծամոր) Ե., 1979, էջ 151 – 152:
[13] Մ.Փ.Հովհաննիսյան, Ագարակի ժայռափորագրությունները (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1990, № 1, էջ 70):
[14] Մեծամոր, էջ 151:
[15] Մ.Փ.Հովհաննիսյան, նշվ. հոդվ., էջ 72:

ութից ավելի կլոր փոսիկներ են: Այս ժայռաղանգվածը նայում է դեպի արևելք: Մեծամորի[16], Սյունիքի, Գեղամա լեռների[17], Ագարակի[18] ժայռակերտ սրբատեղիներում փորագրված նմանատիպ պատկերախմբերի համեմատությունը Ոսկեհատի սրբատեղիի փորագրությունների հետ ենթադրել է տալիս, որ Ոսկեհատի վերոհիշյալ պատկերախումբն առնչվում է բնիկների տիեզերական պատկերացումներին, ունի աստղագիտական-տոմարագիտական նշանակություն:

Հայաստանի ժայռափորագրություններում կլոր փոսիկներով, կետերով փորվածքները մեծամասնությամբ խորհրդանշում են երկնային աշխարհը, անզեն աչքով տեսանելի մոլորակները: Այս մոլորակները սովորաբար թվով հինգն են[19]: Օրինաչափ դասավորությամբ, կլոր փոսիկներով փորվածքներ երևում են նաև Ոսկեհատի սրբատեղիի արևմտյան հատվածում: Ժայռի գագաթից արված ակոսը իջնում է մինչև այդ փորվածքները: Ակոսից ջուրը հոսել է ներքև, որի հետևանքով ժայռի այս հատվածը խիստ մաշվել է: Հոսող ջուրը առնչվում է անձրևի, ջրի պաշտամունքի հետ: Այս պատկերախումբը կարծես խորհրդանշում է երկինքը՝ աստղաբույլերով հանդերձ, տիեզերքը՝ իր անսահմանության մեջ: Ժայռափորագրություններում աստղաբույլերի գոգավոր շրջանակները կապվում են տոմարական հաշվումների հետ: Ոսկեհատի այս պատկերախումբը նման է Վարդենիսի լեռներում (Սև սար) մ.թ.ա. II հազարամյակի վերջին պատկանող ժայռանկարում պատկերված տոմարական նշանակության շրջանակների խմբերին[20]: Գոգավոր շրջանակները, կապված հաշվարկների, տիեզերական պատկերացումների հետ, առկա են նաև Իտալիայի, Եվրասիայի ժայռապատկերներում[21], Մալթայից հայտնաբերված ճարմանդի[22], Մեզինայի ապարանջանի[23], ինչպես նաև նեոլիթ-էնեոլիթյան կավե անոթների, միջին բրոնզեդարյան շրջանի կարմրափայլ սափորների[24], Դվինի պաշտամունքային խեցու, բրոնզե գոտիների[25], Ախալքալաքից գտնված բրոնզե սկավառակի վրա[26]:

Հետաքրքիր են Ոսկեհատի սրբատեղիի հարավ-արևելյան մասի ժայռափորագրությունները: Ժայռի եզրին արված երկու կլոր փոսիկները խոր ակոսով միացած են իրար: Սրան մոտիկ փորված է նույնպիսի պատկեր,

---

[16] Մեծամոր, էջ 153:

[17] ԳՄՆ, էջ 115, 191:

[18] Մ.Փ.Հովհաննիսյան, նշվ. հոդվ., էջ 44:

[19] ԳՄՆ, էջ 141, 191:

[20] ԳՄՆ, էջ 15:

[21] Б.А.Фролов, Начало первобытной символики (по материалам изучения древнейшей Армении) (Պատմա-բանասիրական հանդես 1980, № 1, էջ 93):

[22] Б.А.Фролов, Числа в графике палеолита, Новосибирск, 1974, с. 124 – 141.

[23] А.Р.Демирханян, Б.А.Фролов, Петроглифы Армении и Италии, типы, аналоги, М., 1986, с. 64.

[24] Հ.Ռ.Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան շրջանում, Ե., 1973, էջ 25, 38:

[25] ԳՄՆ, էջ 147, Բ.Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Ե., 1966, էջ 25:

[26] А.Г.Тонаканян, О находке астрономических календарей I тыс. до н.э. (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, № 12, էջ 71):

միայն այն տարբերությամբ, որ մի փոսիկից ակոս է գնում դեպի ժայռաքանդակները: Ինչպես արդեն պարզաբանվել է Մեծամորեն, Այունիքի, Գեղամա լեռների[27], Ագարակի ժայռափորագրություններում[28], վիշապաքարերի վրա[29], հիերոգլիֆ նշաններում[30], գծիկով իրար միացած կլոր շրջանակները արտահայտում են «Երկինք-Երկիր» գաղափարը, նրանց միասնական-միաձույլ վիճակը: Ոսկեհատի սրբատեղիի վերոհիշյալ պատկերում հավանական է նաև աստվածաշնչյան աշխարհաստեղծման նախնական պատկերացումը, երբ Երկինքն ու Երկիրը միաձույլ էին, այնուհետև Աստված այն բաժանեց: Տիեզերական մարմինը տրոհվեց երկու մասի՝ Երկնքի և Երկրի[31]:

Այս ժայռափոր պատկերախումբը ուշագրավ է նաև նրանով, որ մի դեպքում «Երկինք-Երկիր» արտահայտող փորագրությունը ակոսով կապված է սրբատեղիի ճակատային հատվածի կենդանակերպ ժայռաքանդակների հետ: Ընդհանրապես նման ժայռաքանդակները արտահայտում են տարերքի, պտղաբերության գաղափարը: Մ.թ.ա. III հազ. ժայռապատկերներում կենդանիները խորհրդանշում են երկինքը, տիեզերքը[32]: Տիեզերքը, նրա տարերքները կենդանակերպ (վիշապ ձկան, ցուլի և այլն) պատկերներով արտահայտված պատկերացումները երևում են Հայաստանի տարբեր վայրերում գտնվող վիշապաքարերի վրա, ինչպես նաև մ.թ.ա. III հազ. խեցեղենի զարդամոտիվներում[33], Ագարակի ժայռակերտ սրբատեղիում[34], Գեղամա լեռների, Մեծամորի մ.թ.ա. II հազարամյակի կեսերի ժայռանկարներում[35]: Մ.թ.ա. V – IV հազ. Կիլիկիայի ուշ նեոլիթյան, էնեոլիթյան անոթների, Գառնիի, Կիրովականի մ.թ.ա. II հազ. առաջին կեսի բրոնզեդարյան գունազարդ խեցեղենի, Շամքորից հայտնաբերված ծարիրե ճարմանդի զարդամոտիվները՝ նույնպես կենդանիների պատկերներով, արտահայտում են տիեզերքի, նրա տարրերի վերաբերյալ պատկերացումներ[36]: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ ևս տարերքի ուժերը ներկայացված են կենդանիների պատկերներով: Պտղաբերող կենդանին հաճախ խորհրդանշում է տիեզերքը, միաժամանակ մարմնավորում է տարերքի տարբեր երևույթներ[37]: Հայ ժողովրդական հանելուկներում ցուլը, կովը կամ հորթը սովորաբար նշանակում են որոտ, ամպ, անձրև:

Է՞ն ինչն ա ի՞նչ,
Կովը բառաչի,
Ցորթը փախչի (որոտ, կայծակ) Լոռի[38]:

---

[27] ԳՄՆ, էջ 88:
[28] Մ. Փ. Հովհաննիսյան, նշվ. հոդվ., էջ 75:
[29] Հ. Ռ. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 31:
[30] Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Ե., 1973, էջ 238:
[31] Աստվածաշունչ, Ծննդոց, գլ. Ա, 6 – 10:
[32] ԳՄՆ, էջ 18, 20:
[33] Հ. Ռ. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 25, 31:
[34] Մ. Փ. Հովհաննիսյան, նշվ. հոդվ., էջ 70, Հ. Կարագյոզյան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ.Ա, Ե., 1999, էջ 285:
[35] ԳՄՆ, էջ 154:
[36] Հ. Ռ. Իսրայելյան, նշվ. աշխ., էջ 25, 28:
[37] Մ. Աբեղյան, Երկեր, հ.Ա, Ե., 1966, էջ 95 – 96:
[38] Ս. Բ. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Ե., 1965, էջ 12:

Այստեղ խորհրդանշանորեն համադրված են երկու աշխարհները՝ երկնայինը և երկրայինը: Ցույց է տրված կովի՝ երկրային լինելու հանգամանքը, միաժամանակ՝ նրա կապը երկնքի՝ ամպրոպի , կայծակի, տարերքի հետ: Երևում է երկնային և երկրային կյանքի փոխադարձ կապը: Պտղաբերության պաշտամունքի հետագա խորացման ընթացքում կենդանին դառնում է այդ պաշտամունքի գաղափարը մարմնավորող աստվածության կցորդը: Այս պատկերացումները երևում են Գեղամա լեռների, Արագածի ժայռապատկերներում, որտեղ պտղաբերության մայր-աստվածություն արտահայտող կանացի պատկերները զուգորդված են կենդանիների և տիեզերքի պատկերների հետ[39]:

Համանման պատկերացումներ երևում են տրիպոլյան մշակույթում՝ Զաթալ Հույուքի (մ.թ.ա. VII-VI հազ.) սրբարանների հարթաքանդակներում՝ որտեղ պտղաբերության պաշտամունքի հետ կապված աստվածուհիները զուգորդված են ցուլի պատկերի հետ[40]: Կենդանին, որպես աստվածության կցորդ, առկա է նաև Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի բնիկ ժողովուրդների կրոնական պատկերացումներում[41]: Սա խոսում է այն մասին, որ Հայաստանի բնիկների կրոնապաշտամունքային պատկերացումներն ունեն ընդհանրություններ աշխարհի շատ ժողովուրդների կրոնական պատկերացումների հետ:

Մ.թ.ա. I հազ. կրոնապաշտամունքային պատկերացումներում աստվածները հաճախ հանդես են գալիս կենդանիների հետ: Արարատյան (Ուրարտու) թագավորության գլխավոր աստվածը՝ Խալդը, հաճախ պատկերվել է իր կենդանական կցորդի՝ առյուծի վրա կանգնած[42]: Պտղաբերության երևույթները, առնչված երկնային և երկրային աշխարհը խորհրդանշող պատկերների հետ, առկա են նաև Արգիշտի Ա-ի (մ.թ.ա. VIIIդ.)պալատի որմնանկարներում (Էրեբունի): Աստղերից, շրջանակներից կազմված, տիեզերք խորհրդանշող եզրազարդը համադրված է երկնային աշխարհը խորհրդանշող արմավենիների՝ սրբազան ծառերի, աստծո և ծնկաչոք ցուլի պատկերով[43]:

Ոսկեհատի սրբատեղիի կենդանակերպ ժայռաքանդակները, առնչվելով պտղաբերման պաշտամունքի հետ, միաժամանակ արտահայտում են տիեզերքի երկնային աշխարհի գաղափարը: Այսինքն, պտղաբերությունը՝ կյանքի վերածնունդը, երկնքի և երկրի գործուն մասնակցությամբ է տեղի ունենում: Արտահայտված է տիեզերական մարմինների՝ Երկնքի և Երկրի փոխադարձ կապի մեջ լինելու հանգամանքը:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի ժայռակերտ սրբատեղիները պաշտամունքային բնույթին զուգահեռ ունեն աստղագիտական, տոմարագիտական նշանակություն, այստեղ կատարվել են տիեզերքի դիտարկումներ: Դրանք յուրօրինակ բացօթյա հնագույն «աստղադիտարաններ» են, որտեղ փորագրված են տիեզերական պատկերացումների հետ առնչվող պատկերագրեր և գաղափարագրեր: Ոսկեհատի ժայռակերտ սրբատեղին

---

[39] Ս.Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Ե., 1976, էջ 119, 120, աղ. 25, Գ.Հ.Կարախանյան, Պ.Գ.Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970, էջ 155, 223, ԳՄՆ, էջ 61 - 62, նկ. 59, 68:

[40] Մեծամոր, էջ 138:

[41] Э.Н.Новгородова, Мир петроглифов Монголии, М., 1986, с. 42.

[42] ԳՄՆ, էջ 46, 48, նկ. 50, 53:

[43] Կ.Հովհաննիսյան, Էրեբունի որմնանկարները, Ե., 1973, էջ 14, աղ. 3, նկ. 2:

համանման մի հուշարձան է, որտեղ կան աստվածաշնչյան՝ աշխարհաստեղծման նախնական պատկերացումներին առնչվող ժայռափոր պատկերներ: Այս սրբատեղիում փորագրված պատկերների համեմատությունը Ագարակի, Մեծամորի, Վարդենիսի հուշարձանների հետ ենթադրել է տալիս, որ Ոսկեհատի ժայռակերտ սրբատեղին թվագրվում է մ.թ.ա. III հազարամյակով:

СВЯТИЛИЩЕ ВОСКЕАТА

М.П.ОГАНЕСЯН

Резюме

Святилища Армянского нагорья, высеченные в скалах, наряду с культовым назначением, имеют также астрономическое, календарное значение.

На этих памятниках, как и на наскальных рисунках Воскеата, изображены космические, а также библейские сюжеты о сотворении мира.

Наскальное святилище Воскеата датируется, по всей вероятности, III тысячелетием до н.э.